

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Առողջապահության նախարարության քաղաքացիական ծառայության հերկյալ ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար

Մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության  
պահպանման բաժնի պետի  
(ծածկագիր՝ 11-32.2-Ղ4-2)

**Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

- Առողջապահություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

**Պահանջվում է հերկյալ իրավական ակտերի իմացություն.**

«Դեղերի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Լիցենզավորման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Երեխաներին կրճքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին», «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում, ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշում, ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 11-ի N 1024-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N 907-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 806-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշում, ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. սեպտեմբերի 17-ի N 49-Ն հրաման, ՀՀ առողջապահության նախարարի 2018թ. հոկտեմբերի 3-ի N 2525-Ա հրաման (Հավելված 1),

Բաժնի պետը՝

- մասնակցում է երեխաների առողջության պահպանմանն ուղղված քաղաքականության և ռազմավարության մշակմանը.
- մասնակցում է երեխաների առողջության պահպանման ոլորտի իրավիճակային վերլուծությանը, երեխաների առողջության պահպանման ոլորտի գերակա խնդիրների ներկայացմանը, նպատակային ծրագրերի մշակման և ներդրման գործընթացին.
- մանկական մահացության ցուցանիշների նկատմամբ շարունակական հսկողության ապահովում և մասնակցում վերջիններիս իջեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպման գործընթացին մասնակցություն.
- մասնակցում է մանկական ծառայության ոլորտի բուժհաստատություններում բժշկական օգնություն և սպասարկման որակի գնահատման և շարարունակական հսկողության գործընթացի կազմակերպմանը.
- իրականացնում է երեխաների առողջության պահպանման ոլորտի համակարգման աշխատանքները, ծառայության ցուցանիշների և ցուցիչների սահմանում/ մոնիտորինգ, դրա հիման վրա մասնակցում է բնագավառում իրականացվող քաղաքականության և ռազմավարության արդյունավետության վերլուծմանն ու գնահատմանը.

- համակարգում է երեխաների հիվանդանոցային, ամբուլատոր-պոլիկլինիկական, վերականգնողական, առողջարանային ծառայությունների օրենսդրական, ենթաօրենսդրական, իրավական այլ ակտերի, ուղեցույցների մշակման գործընթացը.
- կազմակերպում է երեխաների առողջության պահպանման և բժշկական օգնության կազմակերպման վերաբերյալ մեթոդական ցուցումների, նորմատիվ իրավական ակտերի մշակման և ներդրման գործընթացը.
- մասնակցում է երեխաների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժհաստատությունների կազմավորման սկզբունքների և կադրային ներուժի չափորոշիչների և նորմերի մշակման գործընթացին.
- ապահովում է երեխաների և դեռահասների բուժօգնության/ սպասարկման վերաբերյալ ծրագրային, օրենսդրական և իրավական այլ ակտերի մշակման, այդ հարցերին առնչվող խորհրդատվական ու փորձագիտական աշխատանքների համակարգումը, մասնակցում է երեխաների առողջ ապրելակերպի խրախուսմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, երեխաների նկատմամբ բռնության և դաժան վերաբերմունքի կանխարգելման և առողջապահության ոլորտի արձագանքմանն ուղղված ծրագրերի մշակմանը, համակարգում է «Առողջ դպրոցներ» նախաձեռնությանը.
- իրականացնում է նշված ծառայություններ իրականացնող բուժհաստատությունների կազմակերպա-մեթոդական, խորհրդատվական, բժշկական օգնության որակի կառավարման, լիցենզավորման, աշխատանքային գործունեության ուսումնասիրությունների գործընթացին..
- իրականացնում է երեխաների առողջության պահպանման ոլորտի համակարգման աշխատանքները, ծառայության ցուցանիշների և ցուցիչների սահմանում/ մոնիտորինգ, դրա հիման վրա մասնակցում է բնագավառում իրականացվող քաղաքականության և ռազմավարության արդյունավետության վերլուծմանն ու գնահատմանը.
- համակարգում է երեխաների հիվանդանոցային, ամբուլատոր-պոլիկլինիկական, վերականգնողական, առողջարանային ծառայությունների օրենսդրական, ենթաօրենսդրական, իրավական այլ ակտերի, ուղեցույցների մշակման գործընթացը:

Առողջապահության նախարարությունը պաշտոնակատարին վճարում է ամենամսյա աշխատավարձ՝

**երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք (256623) դրամի չափով:**

- **Ընտրություն կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն, ինքնակենսագրականների ուսումնասիրություն, հարցազրույց:**

**Դիմող ՀՀ քաղաքացիները առողջապահության նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայական/ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

- արական սեռի անձիք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- անձնագրի պատճենը /առաջին և գրանցման էջերով/.
- ինքնակենսագրություն..

**Անձանց հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը գործում է մինչև թափուր պաշտոնը մրցույթի արդյունքով պաշտոնի համալրումը:**

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 13:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 03.09.2019թ.**

**Դիմումները ներկայացնել անձամբ:**

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել՝

Ք.Երևան, Առողջապահության նախարարություն

Կառավարական տուն N3, սենյակ 211, հեռ. 060-80-80-03(1502)